ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

«09» մարտի 2019 թվականի № 79-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
## («ԸՆԴԵՐՔԱԲԵՐ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԸՆԴԵՐՔԱԲԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2019 թվականի փետրվարի 21-ի թիվ 35-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Ընկերությանը 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 03/29.4/2706-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 979.8 հազար (ինը հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 639.9 հազար (վեց հարյուր երեսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև Ընկերությունը սահմանված ժամկետում լիազոր մարմնին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-101 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2019 թվականի փետրվարի 21-ի թիվ 35-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ընկերության տնօրենը վարչական վարույթի նիստերի ընթացքում ներկայացրել էր 2017 և 2018 թվականների տարեկան հաշվետվությունները՝ օգտակար հանածոների

պաշարների շարժի վերաբերյալ: Ընկերության տնօրենը ներկայացրել էր նաև 2019 թվականի մարտի 18-ի թվով երկու՝ 1.186.000 (մեկ միլիոն հարյուր ութսունվեց հազար) և 293.750 (երկու հարյուր ինսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով վճարումների կատարումը հավաստող անդորրագրերը, ինչպես նաև տեղեկանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2019 թվականի մարտի 1-ի դրությամբ ունեցած հարկային պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերության կողմից պետական տուրքի գծով չմարված պարտավորություններ չկան: Ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է նաև շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 782.880 (յոթ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով վճարման անդորրագիր:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

## ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԸՆԴԵՐՔԱԲԵՐ» ՍՊ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 21-ին թիվ 35-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Ընդերքի գործակալության պետին՝ երկօրյա ժամկետում ծանուցել Ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

4/9/2019

X

VERIFIED OCSP 09-Apr-19 18:19:32 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118